

**ՆՈՐ ԲԱՅԱՀԱՅՏՈՒՄՆԵՐ ՀՈՐԻ ԳՐՔԻ
ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ
(ՎԱՆԱԿԱՆ ՎԱՐՂԱՊԵՏ, ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՎԱՅԻ)**

Էյա Սարիբեկյան

Աստվածաշնչի Հորի գիրքը ներշնչման աղբյուր է եղել բոլոր դարերի քրիստոնյաների և, հատկապես, մեկնիչների համար: Հայ մեկնողական գրականության մեջ իրենց ուրույն տեղն ու դերն ունեն Վանական Վարդապետ Տավուշեցին ու Գրիգոր Տաթևացին, մասնավորապես, նրանց հեղինակած Հորի գրքի մեկնությունն ու լուծմունքը:

Մեծիմաստր և առաքամիտր վարդապետրն¹, աստուածահաճոյ և մեծ վարդապետրն² Հովհաննես Վանական Վարդապետ Տավուշեցու³ Հորի գրքի քաղվածո մեկնությունը՝ վերնագրված «Համառատ մեկնութեան Յորայ, հաւաքաց ձեռամբ Վանականի Վարդապետին»⁴ կամ «Գիրք, որ կոչի մեկնութիւն Յորայ, արարեալ ծաղկաքաղօրէն Վանական Վարդապետի հաւաքեցեալ ի Դաթայ և ի Յիսիքոսէ նրբիմաց վարդապետաց ի փառս Աստուծոյ և ի յօգուտ մանկանց Եկեղեցոյ»⁵, մինչև Գրիգոր Տաթևացին Հորի գրքի հայտնի միակ ամբողջական մեկնությունն է:

Մեզ է հասել Գրիգոր Տաթևացու Հորի գրքի լուծմունքի ինքնագիր օրինակը, որի հիշատակարանում հեղինակը նշում է, թե օգտվել է Վա-

¹ **Կիրակոս Գանձակեցի**, Պատմություն Հայոց, աշխատ.՝ Կ. Ա. Մելիք Օհանջանյանի, Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի հրատ., Երևան, 1961, էջ 178, ՃԻԷ + 426 էջ:

² Նույն տեղում, էջ 344:

³ Ապրել և գործել է ԺԲ-ԺԳ դարերում, աշակերտել է Մխիթար Գոշին: Մատենագրական ժառանգության մեջ աչքի է ընկնում նրա Հորի մեկնությունը, որը քաղագրություն է Իսիքիոս Երուսաղեմացու, Եփրեմ Ասորու, Ստեփանոս Սյունեցու, Դավիթ Քոբայրեցու նույնանուն երկերից: Նրա մասին ավելի մանրամասն տե՛ս Ոսկեան Հ., Յովհաննէս Վանական և իր դպրոցը, Վենետիկ, 1922: Վարդան Վարդապետ Արևելցի, Հաւաքումն պատմութեան, Վենետիկ, 1862, էջ Ա-ԺԱ:

⁴ ՄՄ, ձեռ. 1166, թ. 1ա, այն դեռևս անտիպ է:

⁵ Ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա, կազմեց Հ. Յակովբոս վ. Տաշեան, Վիեննա, 1895, էջ 713-714:

նական Վարդապետի Հոբի գրքի քաղվածո մեկնությունից. «Եւ ժողովողն մեկնութեանս է Վանական Վարդապետն»¹: Սակայն պետք է նշել, որ նույն հիշատակարանում Տաթևացին խոսում է նաև իր՝ այլ մեկնիչներից օգտվելու մասին. «...ընթերցմամբ հաւաքեցի զդժուարալոյծ բանս Յոբայ և զմեկնչաց նորա»²: Հ. Ք. Չրաքյանն Իսիքիոսի Հոբի գրքի մեկնության մասին խոսելիս անդրադառնում է նաև երկի՝ հետագա դարերի գրվածքների վրա թողած ազդեցություններին: Տաթևացու նույնանուն երկը վերլուծելիս ակնարկում է. «Տաթևացին յանուանէ միայն զՎանականն կը ճանչնայ», և Վանականի միջոցով՝ նաև մյուս մեկնությունները³: Մեր կարծիքով, եզրակացնել, որ Տաթևացին անվանապես Վանականից բացի Հոբի գրքի այլ մեկնիչների գրվածքներին ծանոթ չէ, կարծում ենք, այնքան էլ ճիշտ չէ, որը կհիմնավորենք ստորև:

Վանականի՝ Հոբի գրքի մեկնությունը մեծածավալ քաղվածո մեկնություն է⁴, բացի Իսիքիոսից օգտվել է նաև այլ հեղինակներից՝ Ստեփանոս Սյունեցի⁵, Եփրեմ Ասորի⁶, Դավիթ Քոբայրեցի⁷, որոնցից մեջբերվող հատվածների կողքին՝ լուսանցքներում, նշում է անունները: Սակայն ՄՄ 1166 գրչագրի լուսանցքներում նշումները հասնում են մինչև 76ա թերթը⁸: Եթե ձեռագրի մնացյալ էջերում նշված հեղինակների մեկնություններից նշումներ չկան, չի նշանակում, որ Վանականը շարունակության մեջ չի օգտվել այդ մեկնություններից: Հնարավոր է, որ գրչագրի կողմից

¹ ՄՄ, ձեռ. 1115, թ. 123ա:

² ՄՄ, ձեռ. 1115, թ. 123բ:

³ **Չրաքյան Հ. Ք.**, նշվ. աշխ., էջ ԽԳ:

⁴ **Ոսկեան Հ.**, նշվ. աշխ., էջ 26-27:

⁵ Նրա մասին առավել մանրամասն տե՛ս **Չրաքյան Հ. Ք.**, նշվ. աշխ., էջ ԽԱ-ԽԲ:

⁶ Եփրեմ Ասորու Հոբի մեկնության մասին տե՛ս Վարդանեան Հ. Ա., Սրբոյն Եփրեմի Մեկնութիւն և սկիզբն Յոբայ, «Հանդէս ամսօրեայ», 1912, թիւ 10, Վիեննա, էջ 617-626, 666-674:

⁷ **Չրաքյան Հ. Ք.**, էջ ԼԸ-Խ: Նաև որոշակի ակնարկ տե՛ս **Հ. Ներսէս վ. Ակինեան**, Մատենագրական հետազոտութիւններ, քննութիւն եւ բնագիր, հտ. Ա, Վիեննա, Մխիթարեան տպարան, 1922, էջ 80-81: **Ակինեան Հ. Ն.**, Դավիթ վարդապետ Քոբայրեցի, «Հանդէս ամսօրեայ», 1908, թիւ 4, 5, էջ 141:

⁸ **Ոսկեան Հ.**, նշվ. աշխ., էջ 26: Վանականի լուսանցային նշումներին անդրադառնում է նաև հայր Բարսեղ Սարգիսյանը, տե՛ս Sargisean Basilio, Dei Tesori Patristici e Biblici, Conservati nella Letteratura Armena, Venezia, 1897, p. 46-48:

չեն նշվել լուսանցային հեղինակային անվանումները: Շարունակության մեջ միայն հանդիպում ենք լուսանցքներում նշվող չափերտների, որոնք Աստվածաշնչից մեջբերվող հատվածների կողքին են դրված: Լուսանցքներում նշված հեղինակների անուններից գատ հաճախ հանդիպում ենք *այլ, այլք* նշումներին, թե ո՞ւմ նկատի ունի Վանականը՝ այս նշումներն անելով, հայտնի չէ: Հ. Ք. Չրաքյանի¹ կարծիքով Վանականն ունեցել է նաև այլ հեղինակների մեկնություններ, իսկ ըստ Հ. Ոսկյանի² տեսակետի՝ հնարավոր է, որ Վանականն իր սեփական խոսքը նկատի ունի (չնայած լուսանցքներում հանդիպում ենք նաև *Վան. նշումների*): Մեր կարծիքով, Վանական վարդապետն իր ձեռքի տակ ունեցել է այս բոլոր հեղինակների ամբողջական մեկնությունները, որոնց հիման վրա էլ շարադրել է իր քաղվածո մեկնությունը: Այլ խնդիր է, որ հետագա դարերում արդեն այդ ամբողջական մեկնություններն անհետանում են և մենք դրանց ծանոթանում ենք միայն Վանականի գրվածքի շնորհիվ: Դժվար է Վանական Վարդապետի այս կամ այն աստվածաբանական-դավանաբանական տեսակետները վերհանել, քանի որ նրանում շատ քիչ է սեփական խոսքը: Եթե նման փորձ անենք, ապա ոչ թե Վանականի աստվածաբանական ձևակերպումների մասին պիտի խոսենք, այլ առանձին-առանձին՝ Ստեփանոս Սյունեցու, Եփրեմ Ասորու, Իսիքիոս Երուսաղեմացու, Դավիթ Քոբայրեցու: Սրանց մասին հարկ չենք համարում խոսել, որովհետև Հ. Ք. Չրաքյանն անդրադարձել է նշված հեղինակներին: Վանականի կատարած մեջբերումներն անհասկանալի կտրտված և համառոտված են: Թեև մեկնությունն ուղղակի չի նշում Վանական Վարդապետի նպատակը, սակայն, հաշվի առնելով այն, որ նա եղել է մեծ ուսուցիչ և ունեցել է շատ աշակերտներ, կարծում ենք, որ նա իր աշակերտներին փոխանցելու համար է ի մի բերել Հոբի գրքի տարբեր հեղինակների մեկնություններից ընտրված հատվածները: Այժմ բերենք մի քանի օրինակներ Վանականի քաղվածո մեկնությունից (հարկ ենք համարում Եփրեմի, Սյունեցու, Քոբայրեցու անունները նշել, իսկ այն հատվածներում, որտեղ նրանց անունները չկան, օրինակները վերագրում ենք Վանականին):

Գրիգոր Տաթևացու և Վանական Վարդապետի նույնանուն գրվածք-

¹ **Չրաքյան Հ. Ք.**, նշվ. աշխ., էջ ԽԱ-ԽԲ:

² **Ոսկյան Հ.**, նշվ. աշխ., էջ 26:

ները համեմատել ենք միմյանց հետ՝ հաշվի առնելով Տաթևացու արած հեղինակային նշումները: Գրիգոր Տաթևացին լուծմունքում ընդամենը մեկ անգամ է նշում Դավիթ Քոբայրեցու և Ստեփանոս Սյունեցու անունները և ուղղակի մեջբերում է անում նրանց խոսքից: Համադրելով Տաթևացու և Վանականի մեկնությունների նույն հատվածները՝ տեսնում ենք, որ Տաթևացին ուղղակի մեջբերում է անում («ասէ Սուրբն Ստեփանոս Սիւնեցի» և «ասէ վարդապետն Դաւիթ»), իսկ Վանականը միևնույն հատվածներում արդեն հեղինակային հղումներ չունի, սակայն մեկնվող նույն համարներն ունեն նույն բովանդակությունը: Ահա այդ հատվածները.

Գրիգոր Տաթևացի

«Ասէ Սուրբն Ստեփանոս Սիւնեցի. «Աստուածային խրատն երեք պատկեր է, այսինքն՝ դառնալ ի չարեաց, գործել զբարիս, և առնուլ զխոստումն»: (77ա)¹ (77ա)¹

Գրիգոր Տաթևացի

«Ասէ վարդապետն Դաւիթ. «Աստուած երեք կերպիւ խրատէ զմարդ. նախ՝ այլոց պատուհասիւ, երկրորդ՝ թէ այնու ոչ խրատի՝ զանձն նորա գտնէ, երրորդ՝ թէ այնու ոչ ուղղի՝ ի մահուամբ խրատեսցէ»: (77աբ)

Ստեփանոս Սյունեցի (Վանական)

«Աստուածաին խրատն երեքպատիկ է, հեռանալ ի չարութենէ, ստանալ զանաքինութիւն, խոստումն անտեսց հանդերձելոց»: (75բ)²

Դավիթ Քոբայրեցի (Վանական)

«Այսպէս խրատի ամենայն ոք. մի այլոց պատուհասիւ և թէ այնու ոչ խրատի՝ յանձն իւր գանեսցի, և թէ այնու ոչ խրատեսցի՝ մահու գանեսցի»: (75բ)

Այս երկու օրինակները ցույց են տալիս, որ Վանական Վարդապետը ծանոթ է Ստեփանոս Սյունեցու և Դավիթ Քոբայրեցու երկերին (հավանական է՝ ամբողջական): Ստեփանոս Սյունեցու և Դավիթ Քոբայրեցու երկերին Գրիգոր Տաթևացին ևս ծանոթ է և, ամենայն հավանականությամբ, իր ձեռքի տակ ունեցել է դրանք: Համադրելով բերված օրինակները՝ մենք տեսնում ենք, որ մտքի առումով դրանք նույնն են, բայց կան բառային տարբերություններ, որոնք կարող ենք երկու ձևով մեկնաբանել. առաջին՝ Տաթևացին ուղղակի մեջբերելիս փոխել է որոշ բառեր, սակայն այս դեպքում անհասկանալի է մնում՝ ինչո՞ւ է նշում. *ասէ Սուրբն Ստեփանոս Սիւնեցի* կամ *ասէ վարդապետն Դաւիթ*, քանի որ նման

¹ Օրինակները բերվում են ըստ ՄՄ 1115 ինքնագրի (անտիպ):

² Օրինակները բերվում են ըստ ՄՄ 1166 ձեռագրի (անտիպ):

հղումները ենթադրում են ուղղակի բառացի մեջբերումներ: Երկրորդ՝ Տաթևացին իր ձեռքի տակ ունեցել է Սյունեցու և Քոբայրեցու մեկնությունների այլ օրինակներ (գուցե ամբողջական), որն ավելի հավանական է թվում: Վանականն, անշուշտ, այս հատվածներում մեջբերում է հենց Ստեփանոս Սյունեցու և Դավիթ Քոբայրեցու խոսքերը, նա ունեցել է նշված հեղինակների ամբողջական մեկնությունները և օգտվել է դրանցից իր ամբողջ աշխատության մեջ:

Շատ ավելի հետաքրքիր է, երբ փորձում ենք Գրիգոր Տաթևացու լուծմունքում Եփրեմ Ասորու ուղղակի մեջբերած խոսքը համադրել Վանականի համապատասխան համարների հետ: Ինչպես վերևում նշեցինք, Վանականը մինչև Յոթ ԼԳ գլուխն ունի մեկնիչների անունների լուսանցային նշումներ: Գրիգոր Տաթևացու մոտ Եփրեմ Ասորու մեջբերած խոսքը Յոթ ԽԲ գլխին է վերաբերում: Վանականի մոտ Եփրեմի խոսքը միահյուսված է իր մեկնողական խոսքին:

Գրիգոր Տաթևացի

«Բան Սրբոյն Եփրեմի. «Հակառակել հոգոյն է, մարտն՝ մարմնոյ, կռիւ՝ բանի: Մի՛ յաճախեցէր, որպէս Ադամ, զի ես հող եմ և՛ յերկրէ, և՛ տկար, և՛ տգէտ, դու՛ երկնատր, և՛ կարող, և՛ իմաստուն, զի՛ հարցանես յինէն: Դու՛ բնութեամբ բարի, և ես՛ ստեղծմամբ, այլ չարն կամօք և գործով: Վասն այն ընդ՝ նա կոռւիմ և ոչ ընդ՝ քեզ»: (116բ)

Վանական Վարդապետ

«Եբաց գբերան իւր Յոթ և ասէ. «Գիտես, Ամենագէտ, ոչ եթէ տերութեանդ քում հակառակ կացի, այլ վասն զի նախատէին զիս բարեկամք իմ, յողորմութիւնդ քո ապաւինեալ խաւաթի աղերսի, և անձր, մի՛ յաճախեր առ իս հարցաձս մեծամեծս, զի ես հող եմ և մոխիր, ընդ չարին եւեթ գիտեմ մարտնչել. ոչ եթէ ընդ՝ քեզ, Տէ՛ր, պատերազմիցիմ, ընդ սատանայի գիտեմ կոռւիլ, իսկ ընդ՝ քեզ ոչ ժպրիցիցիմ խաւաթի»: (97բ)

Ինչպես տեսնում ենք, ակնհայտ է, որ Վանական Վարդապետը այս գլուխների մեկնության մեջ ևս օգտվել է այլ մեկնություններից (տվյալ դեպքում՝ Եփրեմ Ասորու), պարզապես նշումներ չի արել, որովհետև ուղղակի մեջբերումներ չեն, այլ իր պատմողական-մեկնողական խոսքը՝ համեմված Եփրեմ Ասորու մեկնությունով: Իսկ Տաթևացին ուղղակի է նշում Եփրեմ Ասորու անունը և մեջբերում նրա խոսքը, որից էլ կարելի է ենթադրել, որ նա ունեցել է այդ մեկնությունը, որից և մեջբերում է արել:

Որ և՛ Տաթևացին, և՛ Վանականը իրենց ձեռքի տակ ունեցել են Եփրեմ Ասորու ամբողջական մեկնությունը, բացահայտվում է ՄՄ 1138 ձեռագրում տեղ գտած մի միավորից, որը վերնագրված է «Ի բանէն Յոբայ Բարսղի ասաց[եալ]», որում, ի թիվս այլ հեղինակների, լուսանցքում նշվում է Եփրեմ Ասորու (Եփր) անունը: Դրանք «Իսելամո՛ւտ իցես կարգի

բազմաստեղաց» և «Ասիդն սեւագոյն» հատվածների մեկնություններն են: Համեմատելով այս հատվածները Տաթևացու և Վանականի համապատասխան համարների մեկնությունների հետ՝ տեսնում ենք, որ Վանականը նույնությամբ մեջբերում է սույն խոսքերը, սակայն առանց լուսանցքային հեղինակային նշումների: Տաթևացին, կրկին առանց նշելու Եփրեմի անունը, ունի նման փոքրիկ հատված:

Եփրեմ Ասորի

«Բն. Խելամո՛ւտ իցես կարգի բազմաստեղաց: Մկ. Սայլ աստեղաց առանց եզանց, որպէս ընթանան. նախախնամութիւն և մարդեղութիւն: Խոստանան քաղղեացոց գիտել ինչ վասն// սոցա ոչինչ կարեն յայտնի ասել, թէպէտ և համբաւեն Ռ և Շ աստղ, որով վարեն զծննդաբանութիւն»¹:

Վանական Վարդապետ

«Խելամո՛ւտ իցես կարգի բազմաստեղացն: Խոստանան քաղղեացիք գիտել ինչ վասն սոցա, ոչինչ կարեն յայտնի ասել, թէպէտ և համբաւեն հազար և հինգ հարիւր աստղ, որով վարեն զծննդաբանութիւն»²:

Գրիգոր Տաթևացի

«Բն. Կարգի բազմաստեղաց: ...Սայլն՝ որ վեցկի ասեն: ...այլև նախախնամութիւն և մարդեղութիւն՝ եզինք, և սպասաւոր՝ հրեշտակք»³:

Բերված օրինակներում ակնհայտ են իմաստային նմանությունները: Երեք մեկնիչներն էլ մեկնվող միևնույն հատվածը միանման են մեկնում: Այս օրինակները հաստատում են մեր կարծիքը, որ հայ իրականության մեջ եղել է Եփրեմ Ասորու Հոբի գրքի ամբողջական մեկնություն, որից օգտվել են Վանական Վարդապետն ու Գրիգոր Տաթևացին:

Երբեմն Վանականի անհեղինակ մեջբերումները Տաթևացու մոտ փոխարինվում են հեղինակային մեջբերումների, ինչպես օրինակ՝ *Բազէ տարածեալ զթևս* (Յոբ ԼԹ 26) խոսքերը մեկնելիս Տաթևացին մեջբերում է անում Փիլոն վարդապետ Եբրայեցուց. «Որպէս ասէ Փիլոն վարդապետն Եբրայեցոց. «Յաշխարհն Հնդկաց, ընդդէմ հարաւոյ մայրեացն, ի վերայ օդոյն տարածեալ զթևս անշարժ կայ բազէ. մինչ շարժի անտառն ի հողմոյ և աղաւնիքն անկանին յոստոցն՝ ի վերայ հարձակի»⁴: Վանա-

¹ ՄՄ, ձեռ. 1138, թ. 216աբ:
² ՄՄ, ձեռ. 1166, թ. 85բ:
³ ՄՄ, ձեռ. 1115, թ. 93բ:
⁴ ՄՄ, ձեռ. 1115, թ. 99ա:

կան Վարդապետը միևնույն մեջբերումն անում է առանց մատնանշելու հեղինակին՝ ասելով. *Կամ թէ քումէ իմաստութենէ եկաց. բազէ տարածեալ...*¹ և շարունակում նույնությամբ: Վերը նշված ՄՄ 1138 ժողովածուի *Ի բանէն Յորայ Բարսղի ասացեալ*² քաղվածո միավորում ի մի են բերված Բարսեղի, Փիլոնի, Որոգինեսի և Եփրեմի Հոբի գրքի մեկնություններից (կամ այլ միավորներից) հատվածներ (հեղինակային նշումները կատարված են լուսանցքում): ՄՄ 1138 գրչագրում *Բազէ տարածեալ զթևս* հատվածի կողքին հեղինակային նշում չկա, սակայն այն նույն ձևակերպումներն ունի, ինչ Տաթևացին է մեջբերում: Ելնելով Տաթևացու մեջբերած հեղինակային հղումից՝ կարող ենք ճշտել, որ այս հատվածի մեկնության հեղինակը Փիլոն Եբրայեցին է: Այս միավորում գտնում ենք Փիլոնին վերագրվող ևս մեկ հատված, որն առկա է Վանական Վարդապետի մեկնության մեջ³, որտեղ նա բառացի կրկնում է այն (սակայն լուսանցքում հեղինակի անուն չկա):

Փիլոն Եբրայեցի

«Բն. Երթեալ իցե՞ս յակն ծովու: Մկ. Տեսե՞ր, ասէ զլիւիթան գնդակօքն արգելու զակն անդընդոց և այնչափ թողուցում ինչ, զի բաւական ծածկիլ իւրոյ մարմնոյն»⁴:

Վանական Վարդապետ

«Հասեալ իցե՞ս յակն ծովուն: Տեսե՞ր, ասէ զլիւիթան գնդակաւքն արգելու զակն անդընդոց և այնչափ թողացուցանեմ ինչ, զի բաւական ծածկիլ իւրոյ մարմնոյն»⁵:

Գրիգոր Տաթևացին Հոբի գրքի լուծմունքում Բարսեղ Մեծից ունի մեկ ուղղակի մեջբերում: ՄՄ 1138 ձեռագրի վերը նշված միավորը այս հատվածը ևս վերագրում է Բարսեղին, Վանականը նույնությամբ կրկնում է այն (լուսանցքում նշում չկա): Ի տարբերություն Վանականի, որն այս հատվածը մեկնել է Հոբ ԼԸ 12 համարի մեջ, Տաթևացին մեկտեղել է լույսին վերաբերող հատվածները և մեկնել *Վասն լուսոյ* վերնագրի ներքո:

Բարսեղ Մեծ

«Բն. Եթէ առ քեզ կար-

Վանական Վարդապետ Գրիգոր Տաթևացի

«Եթէ առ քեւ կարգես- «Զի՞նչ երկիր իցէ, յորում

¹ ՄՄ, ձեռ. 1166, թ. 89ա:

² ՄՄ, ձեռ. 1138, թ. 216աբ:

³ ՄՄ, ձեռ. 1166, թ. 84ա:

⁴ ՄՄ, ձեռ. 1138, թ. 216ա:

⁵ ՄՄ, ձեռ. 1166, թ. 84ա:

գեաց զլոյս առաւա- տուն: Մկ. Այն, որ յա- ռաջնումն ատուրն հա- մասփիռէր և ի Դ՝ ակն տուրնջեան եղև նախ- քան զքո գոյացութիւն»¹:

ցի զլոյս առաւաւտին: Այն, որ յառաջնում ատուրն համասփիռեր և ի Դ՝ ակն չորրորդումն՝ ակն տուրնջեան եղև նախ- քան զքո գոյացու- թիւն»²:

լոյսն ագանիցի:լոյսն համասփիռ, յառաջնումն ատուր գոյացեալ, և զերիս գիշերն ի վերին արփին կցեալ՝ ըստ ոմանց, և կամ՝ ի դրախտն ժողովե- ալ, ըստ սրբոյն Բարսղի»³:

ՄՄ 1138 ձեռագրում առկա Բարսեղ Մեծին վերագրվող մյուս հատվածը⁴ որոշ հավելումներով կրկնվում է Վանականի մեկնության⁵ մեջ, իսկ Տաթևացու լուծմունքում, որպես երկի յուրահատկություն, նյութը շարադրվում է *Վասն անգեղ* վերնագրում⁶:

Բարսեղ Մեծ

«Բն. Թէ քո հրամա- նաւ վերանա արծուի: Մկ. Ահագին և թա- գաւորական թռչունս այս, վերանա մերձ յարփին և անտի իջե- ալ լուանայ յաղբերս և մանկանայ զծերու- թիւն: Անկղ ասեն Բ բոյն առնէ և ի միան ձագն հանէ և ի մին զբերա խայծն դնէ, ոմանք ի միմեանց ծնեալ բազմակեաց են յանկեղաց և կիսոց ծնունդ այսպէս ասի. ծանակն, որ գտանի ի

Վանական Վարդապետ

«Բն. Կամ թէ քո հրամանաւ վերանայ արծուի: Մկ. Ահա- գին և թագաւորական թռչ- չունս այս, վերանայ բարձ- րաթռիչ գոլով մերձ յարփին և անդուստ իջեալ լուանա յաղ- բերս և մանկանայ զծերու- թիւն: Եւ Տէր մեր եկեալ արար նորոգումն բնութեանս, ըստ մարգարէին. «Նորոգես- ցէ որպէս արծուոյ զմանկու- թիւն քո»: Եւ ապա վերացաւ առ Հայր, որ էջն ի ստորին կողմն երկրի նոյն է, որ ելն ի վերոյ, քան զամենայն, և ի գալստեանն իւր առ նայ ժողո- վին ամենայն սուրբքն, ուր

Գրիգոր Տաթևացի

«Անգղ միայն ի վերայ իւր բունոյն նստի և ոչ այլ ուրեք: Եւ երկու բոյնն. նախ՝ երկինքն և երկիրս: Երկրորդ՝ եկե- ղեցի և կայանք հոգւոց: Անախտ ծնունդ նախ՝ ի Հօրէ: Երկրորդ՝ ի մօրէ: Երրորդ՝ աւազանաւան մեք: Չորրորդ՝ յարու- թիւն մեր ի փառս: Եւ կերակուր է Հօր փրկու- թիւն մարդկան և Որդ- ւոյ՝ բարի գործն մեր, և Հոգւոյն՝ փառաբանու- թիւն»:

¹ ՄՄ, ձեռ. 1138, թ. 216ա:
² ՄՄ, ձեռ. 1166, թ. 84ա:
³ ՄՄ, ձեռ. 1115, թ. 91ա:
⁴ ՄՄ, ձեռ. 1138, թ. 216ա:
⁵ ՄՄ, ձեռ. 1166, թ. 89ա:
⁶ ՄՄ, ձեռ. 1115, թ. 100ա:

հնդիկս ի միջին այլ ունի շարժուն զայն բերեալ ի բոյնն դնէ ընդ իւր և ի շարժեալականն ի մէջ վանականին ծնանի անկղ անդուստ յղացեալ, որ է նշանակ անախտ ծննդեան Որդոյ»:

մարմինն իցէ, անդր ժողովեցին արծուիք վաղվաղակի: Եւ անգղ ի վերա բունո իւրոյ նստեալ դադարիցէ: Ոմանք ի միմեանց ծնեալ բազմակեաց են յանգեղաց և կիսոց ծնունդ այսպէս ասի. ծանակն, որ գտանի ի հնդիկս ի միջին այլ ունի շարժուն, զայն բերեալ ի բոյնն դնէ ընդ իւրեաւ և ի շարժելականն ի մէջ վանականն ծնանի անգղ անդուստ յղացեալ, որ էն վանական ախտ ծննդեանն Որդոյ: Անգղ հայր իմանի և բոյն քերորեական աթոռն և նիստ և դադար, զի նայ ոչ խոնարհեալ առ մարմին, այլ որդի եւ ծածուկ կայ, զի անտէս է, քանզի անմարմին է և խնդրէ կերակուր զփրկութիւն մարդկան, այլև զբարի գործս մարդկան և զփառաբանութիւն իմանալեացն և զգալեացս»:

ՄՄ 1138 գրչագրի նշված միավորում տեղ է գտել նաև Որոգինեսի անվամբ երեք համարների մեկնություն, որոնք նույնությամբ գտնում ենք Վանականի գրվածքում, իսկ Տաթևացին Որոգինեսի մտքերն օգտագործում է հատվածաբար՝ միահյուսված իր մտքերին:

Որոգինես

«Բն. Համբարեալ՝ կայցէ: ՄԿ. Ջդարպանդա դրանն բանալն Նեոինն հրամանաւ»¹:

Վանական Վարդապետ Գրիգոր Տաթևացի

«Համբարեալ՝ կայցէ:ը- նդ որս իմանի և ժամանակ Մկ.Տասներորդ՝ Նեոն, երևելո Նեոինն զդարբան- յորժամ բանայ զդուռն դայ դռանն բանալն Նեոինն դարբանդաց»¹: հրամանաւ»²:

¹ ՄՄ, ձեռ. 1138, թ. 216ա:

² ՄՄ, ձեռ. 1166, թ. 85ա:

Այժմ անդրադառնանք մի շատ կարևոր խնդրի ևս: Որոգիների Հոբի գրքի մեկնությունից հայերեն որևէ հատված չի հասել մեզ, այլ հայտնի են միայն լատիներեն, հունարեն հատակոտորներ²: Հայագիտության մեջ մինչ օրս որևէ անդրադարձ չի եղել Որոգիների Հոբի գրքի մեկնության *պատճառ*-ին: Մատենադարանի մի գրչագրում գտանք Որոգիների Հոբի գրքի մեկնության *պատճառ*-ը՝ «Որոգիների ասացեալ ի տեսութիւն այլաբանութեամբ»³ խորագրով, որը Գրիգոր Աբասյանի պայմանական «Գիրք պատճառաց» խորագիրը կրող ժողովածուի հնագույն ձեռագրում բացակայում է (ՄՄ, ձեռ. 1879): Հետաքրքիր է նաև այն փաստը, որ Որոգիների այս նույն *պատճառ*-ը մատենագրության մեջ ներկայացվել է հայերեն թարգմանված մեկնության մի մաս⁴: Այն փաստը, որ ՄՄ 1981 գրչագրում տեղ է գտել նաև Որոգիների Հոբի գրքի մեկնության *պատճառ*-ը, հիմք է տալիս եզրակացնելու, որ հայ իրականության մեջ եղել է նաև Որոգիների Հոբի գրքի մեկնության հայերեն ամբողջական տարբերակը, որը, սակայն, մեզ չի հասել: Որոգիներն Ալեքսանդրյան այլաբանական դպրոցի գլխավոր ներկայացուցիչներից է և առաջին մեկնիչը: Նրա երկերն ամբողջությամբ ողողված են այլաբանություններով, այս *պատճառ*-ը ևս զերծ չէ այլաբանությունից, որն էապես տարբերվում է մեզ հասած Հոբի գրքի մեկնությունների մյուս՝ Իսիքիոս Երուսաղեմացու, Եփրեմ Ասորու, Ստեփանոս Սյունեցու *պատճառ*-ներից: Նա, հիմքը դնելով թվերի այլաբանական խորհրդի վրա, այլաբանորեն է մեկնում Հոբի յոթ տարիները, յոթ տղաների և երեք աղջիկների թիվը, չորս թվի խորհուրդը: Տաթևացու մոտ ևս գտնում ենք թվերի խորհրդաբանական մեկնաբանությունը, ինչպես չորս թվի խորհուրդը. «Բազում է խորհուրդ *չորից*, այլ ես ասեմ քսան թուով. առաջին՝ չորս տարերք, և չորս եղանակ, և չորս կողմ երկ-

¹ ՄՄ, ձեռ. 1115, թ. 92ա:

² *St' u Patrologiae cursus completus, accurante J.-P. Migne*, t. 12, Brepols-Turnhout, p. 1032-1049, նաև PG, t. 17, p. 371-522:

³ ՄՄ, ձեռ. 1981, թ. 209աբ: Սույն թվահամարի ձեռագիրը բաղկացած է երկու տարբեր ձեռագրերից, որոնցից երկրորդն ամբողջությամբ Աստվածաշնչի գրքերի *պատճառ*-ներ են (ժողովածոյ, ԺԵ. դար):

⁴ *Clavis Patrum Graecorum*, v. 1, Patres Antenicani, Cura et studio Maurith Geerard, Brepols-Turnhout, 1983, 1505 (2) (CPG). Այստեղ նշված է միայն ՄՄ 1981 ձեռագրի միայն 209ա թերթը, մինչդեռ սույն միավորն ընդգրկում է 209աբ թերթերը:

րի, և չորս հողմունք: Երկրորդ՝ չորս գետք Եդեմայ, և չորս կառքն Եզեկի-
էլի, և չորս ավետարանիչք, և քառադէմ խաչն...»¹, իսկ յոթ թվի խոր-
հուրդն այս է. «Նախ՝ եօթն դար կենցաղոյս: Երկրորդ՝ ատուրք շաբաթու:
Երրորդ՝ շաբաթուց շաբաթ: ...եօթնարփեան զօրութիւնք հոգւոյն: Երկ-
րորդ՝ եօթն հրեշտակք, որ ի ներքոյ աթոռոյն Աստուծոյ...եօթն գոտիք մո-
լորակաց, մարդս է ի չորս տարերց և երեք մասն հոգւոյն, եօթն աստի-
ճան քահանայից, եօթն խորհուրդք եկեղեցւոյ, եօթն առաքինութիւնք աս-
տուածային և մարդկային...»²: Պատրճառ-ում զուգահեռներ են անցկաց-
վում Քրիստոսի երկրային կյանքի դրվագների և Քրիստոսի փրկագոր-
ծության խորհրդի հետ. 'Եւ թշնամեաց ցօօքն զւթն դարեան վիշտսն
կրէր յինքեան ի խորհուրդս Քրիստոսի և յութեակ ամին զդարձն առող-
ջութիւն, որ էր անճառ տնօրէնութեան խորհուրդ»³: Հետաքրքրական են
պատրճառ-ում տեղ գտած Հոբի զավակների և նրանց անունների բա-
ցատրոյթյուններին վերաբերող հատվածները. «...զմինն՝ տիւ, և զմիան՝
տաշխն, և զմիան ամաթեղջիր, որ իմանալիք լեալ մեզ բանն, ի դատերս
Սիոնի որոնի. լուսաւորեալ տիւն է Երուսաղէմ, որ և մակագրի ի կերպ
ճննդականի մօր, իսկ միան՝ անուշահոտութիւն հոտոց՝ է եկեղեցի, ուստի
մաքուր է գործականն հոտ անուշ «զՔրիստոս յինքն ունի գլուխ, իսկ
ամաթեղջիրն⁴, զկուսականն տարբերէ դէմս, ուստի զեղջիրն փոխանակ
մարմնոյն, որ ի կուսէն, այլևս վերստին իմանալին Սիոն, զորս Քրիստոսի
անդ բնակեալն ամենայն սրբովքն ի փառս»⁵: Տաթևացին, նմանվելով և
զարգացնելով Հոբի դուստրերի անունների բացատրոյթյունների այլա-
բանական խորհուրդը, գրում է. «Տիւ, Կասիա (որ նոյն Տաշխն է - Է. Ս.),
Ամաթեղջիր, որ է բան, ցասում և ցանկութիւն, ...հինն Երուսաղէմ, և
նորս Եկեղեցի, և վերինն Սիոն: ...Տիւն ի մեզ է լուսաւոր հաւատ, և (կա-
սիան - Է. Ս.) խունգն անուշահոտ գործք, և ամաթեղջիր, որ է բազմա-
խորհուրդ, նշանակէ ի մեզ զբազում և զմեծ խորհուրդն աստուածպաշ-
տութեան»⁶: Վանական վարդապետն իր՝ Հոբի գրքի մեկնության մեջ

¹ ՄՄ, ձեռ. 1115, թ. 121բ:

² Նոյն տեղում, թ. 119բ:

³ ՄՄ, ձեռ. 1981, թ. 209ա:

⁴ ՆԲՀԼ-ում՝ ամաթեղջիր, հտ. Ա, էջ 51:

⁵ ՄՄ, ձեռ. 1981, թ. 209բ:

⁶ ՄՄ, ձեռ. 1115, թ. 120աբ:

գրում է ստաշխի և կասիայի նույնը լինելու մասին. «ստաշխն, որ է անուշահոտ որպէս կասիայն»¹: *Ստաշխ, կասիա, խունկ, բնեկն* նույնիմաստ բառեր են, որոնք բոլորն էլ գործածական են հայ մատենագրության մեջ: Հաշվի առնելով Տաթևացու՝ Հոբի գրքի լուծմունքի, Որոգինեսի մեկնության *պատրճառ*-ի, ՄՄ 1138 գրչագրից բերված օրինակների միևնույն հատվածների նմանությունները՝ կարող ենք ասել, որ հայ իրականության մեջ եղել է Որոգինեսի՝ Հոբի գրքի մեկնության ամբողջական տարբերակ, ինչպես նաև Բարսեղ Մեծի, Փիլոն Եբրայեցու Հոբի գրքի անդրադարձների (ճառ, նամակ, մեկնություն) հայերեն թարգմանություններ, որոնցից էլ տարբեր ժամանակներում տարբեր մեկնիչներ օգտվել և մեջբերել են իրենց նախընտրած հատվածները: Տաթևացու մոտ նրանց անուններով հղումներ ենք գտնում լուծմունքի այն հատվածներում, որտեղ Վանականն արդեն չունի լուսանցքային նշումներ, և որոնց հեղինակային պատկանելիության հարցերը հստակ ճշգրտվում են ՄՄ 1138 ձեռագրի վերը նշված միավորի մեկնության հատվածների լուսանցքային նշումների շնորհիվ:

Գրիգոր Տաթևացու և Վանական Վարդապետի մեկնաբանման տարբերություններից մեկն էլ այն է, որ Տաթևացին մեկնելիս աստվածաբանական բացատրությունը լրացնում է փիլիսոփայականով, որպես օրինակ բերում ենք Յոթ ԼԳ 29 համարի մեկնությունը, որտեղ Վանական Վարդապետը միայն մեջբերումներ է անում Ստեփանոս Սյունեցուց և Դավիթ Քոբայրեցուց, մինչդեռ Տաթևացին բազմաթիվ աստվածաբանական թվարկումների կողքին հիշատակում է նաև Պորփյուրին՝ մեջբերելով նրա խոսքը. «Ութերորդ՝ այլ ևս երեք է կարգ ճանապարհին Աստուծոյ, այսինքն՝ նախքան ստեղծանելն, որ է տեսութիւնն Աստուծոյ, և ի ստեղծանելն, և յետոյ՝ նախախնամելն: Զայսմանէ ասէ Պորփիրն. *Նախքան զբազումս, ի բազումս, և ի վերայ բազմաց*»²:

Այսպիսով, Տաթևացին օգտվել է Վանական Վարդապետի մեկնությունից և բացի նրա երկից՝ իր ձեռքի տակ ունեցել է Եփրեմ Ասորու, Ստեփանոս Սյունեցու, Դավիթ Քոբայրեցու, Որոգինեսի Հոբի գրքի մեկնությունները (ամբողջական կամ հատվածաբար), ինչպես նաև Բարսեղ Մեծի, Փիլոն Եբրայեցու մատենագրական ժառանգությունից Հոբի գր-

¹ ՄՄ, ձեռ. 1166, թ. 97դ-98ա:

² ՄՄ, ձեռ. 1115, թ. 77բ:

քին վերաբերող հատվածներ: Հայ իրականության մեջ Եփրեմ Ասորու կիսատ համարված մեկնությունը ամբողջական է եղել, որից օգտվել են Վանական Վարդապետն ու Գրիգոր Տաթևացին: Որոգիների անունով մեկնության որևէ այլ հատված հայտնի չէ, բացի ՄՄ 1981 ձեռագրում տեղ գտած *պատրճառ*-ից, վերը նշված օրինակները ցույց են տալիս, որ Որոգիների Հոբի գրքի մեկնությունը եղել է ամբողջական (հունարենով մեզ են հասել առաջին երեք գլուխների մեկնությունը)¹: Բարսեղ Մեծի անունով Հոբի գրքի մեկնության հատվածներ մեզ հասել են նրա նամակներում², որոնց թարգմանությունները գործածական են եղել նաև հայ իրականության մեջ:

Վանական Վարդապետը ևս ունեցել է Եփրեմ Ասորու, Ստեփանոս Սյունեցու, Դավիթ Քոբայրեցու մեկնությունների ամբողջական տարբերակները, որովհետև երբ համադրում ենք Վանականի և Տաթևացու միևնույն հատվածների մեկնությունները, ապա տեսնում ենք լուրջ նմանություններ՝ Տաթևացու մոտ՝ հեղինակների հղումներով, Վանականի մոտ՝ առանց հղումների կամ միահյուսված սեփական մեկնողական խոսքին, որի ինքնուրույնությունը շատ քիչ է երկում: Վերոնշյալ օրինակներից կարելի է եզրակացնել, որ Վանականի *այլ*, *այլք* լուսանցքային նշումների մի մասը վերաբերում են Որոգիներին, Բարսեղ Մեծին, Փիլոն Եբրայեցուն:

¹ Patrologia cursus completus, accurante et recognoscente J.-P. Migne, t. 17, Turnholti (Belgium), Typographi Brepols editores pontificii, p. 371-522.

² Ancient Christian commentary on scripture, Old Testament, VI, Job, Edited by Manlio Simonetti and Marco Conti, General editor Thomas C. Oden, USA, 2006, p. 223. Nicene and Post-Nicene Fathers of the Christian church, Second series, v. VIII, Basil Letters, 2-08: 114 (NPNF). TLG, 2040.004.

**ՆՈՐ ԲԱՅԱՀԱՅՏՈՒՄՆԵՐ ՀՈՐԻ ԳՐՔԻ
ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ
(ՎԱՆԱԿԱՆ ՎԱՐԴԱՊԵՏ, ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՎԱՑԻ)**

Էլյա Սարիբեկյան

Քանալի բառեր. Հորի գիրք, մեկնություն, Գրիգոր Տաթևացի, Վանական Վարդապետ, Որոգիներ, Եփրեմ Ասորի, Ստեփանոս Սյունեցի, Բարսեղ Մեծ, լուսանցքային նշում, պատճառ

Հորի գրքի՝ Վանական Վարդապետի քաղվածո մեկնությունը մեզ է հասել ամբողջական տարբերակով: Այն առանձնահատուկ է նրանով, որ պարունակում է սկզբնաղբյուրներից մեջբերումներ, որոնց շնորհիվ ծանոթանում ենք նախորդ դարերում հայտնի (գուցե ամբողջական) մեկնությունների հետ, որոնք մեզ չեն հասել առանձին ամբողջական տարբերակներով: Հորի գրքի՝ Հովհաննես Վանական Վարդապետ Տավուշեցու քաղվածո մեկնությունը մինչ Գրիգոր Տաթևացին եղած առայժմ հայտնի միակ ամբողջական մեկնությունն է: Վանական Վարդապետն իր մեկնությունը շարադրելիս օգտվել է Իսիքիոս Երուսաղեմացուց, նա՝ այլ հեղինակներից՝ Եփրեմ Ասորի, Ստեփանոս Սյունեցի, Դավիթ Քոբայրեցի, որոնցից մեջբերվող հատվածների կողքին՝ լուսանցքներում, կրճատ նշում է նրանց անունները:

**НОВЫЕ ОТКРЫТИЯ В ТОЛКОВАНИИ КНИГИ ИОВА
(ВАНАКАН ВАРДАПЕТ, ГРИГОР ТАТЕВАЦИ)**

Эля Сарибекян

Ключевые слова: Книга Иова, толкование, Григор Татеваци, Ванакан Вардапет, Ориген, Ефрем Сирийский, Степанос Сюнеци, Василий Великий, маргинальная пометка (записи на полях), причина.

Компилятивное толкование на книгу Иова Ванакана Вардапета (Архимандрита) дошло до нас в полной версии. Оно уникально тем, что содержит цитаты из источников, благодаря которым можно составить представление о сделанных в предыдущих веках и недошедших до нас полностью или контаминированных толкованиях (возможно, в их полных версиях). Толкование Ванакана Вардапета на книгу Иова является единственным полным известным на данный момент толкованием, написанным до Григора Татеваци. В своем Толковании Ванакан использовал труды Исикиоса Исихия Иерусалимского, а также других авторов:

Ефрема Сирина, Степаноса Сюникского, Давида Кобайрского. На полях рукописи Ванаканом наряду с цитатами из их трудов указаны и имена этих авторов.

**NEW DISCOVERIES IN THE COMMENTARY ON THE BOOK OF JOB
(VANAKAN VARDAPET, GRIGOR TAT'EVAC'I)**

Elya Saribekyan

Key words: *Book of Job, commentary, Grigor Tat'evac'i, Vanakan Vardapet, Origen, Ephrem the Syrian, Step'anos Syunec'i, St. Basil the Great, in margine, cause.*

The Commentary on the Book of Job, made by Vanakan Vardapet Tavusheci, has reached us in a full version, It is unique for that it contains quotations from the original sources, thanks to which we get aware of the interpretations (perhaps complete) known during the previous centuries. Those interpretations did not survive in their primary forms.

Vanakan Vardapet's Commentary on the Book of Job is still the only complete original commentary made before Grigor Tatevac'i. Composing his work, Vanakan Vardapet used the analogous writings of Hesychius of Jerusalem, as well as the commentaries of Ephrem the Syrian, Step'anos Syuneci and Davit' K'obayrec'i. Quoting the above mentioned authors, Vanakan Vardapet cited them in the margins.